114

ՀԵ 308, Էլմ. 713, Բ Մն. 6:18,21

1. Ո՛վ Եհովա Աստված, մեր Հայր,
Քեզ կաղերսենք խոնարհաբար՝
Երեսդ մեզի այսօր դարձուր,
Տաճարս այս նոր փառքովդ լեցուր:

2. Այս տանս մեջ ամեն սուրբ օր
Պաշտենք զՔեզ սրտով բոլոր.
Ջերմ աղոթքներ վեր բարձրանան
Անուշահոտ խունկի նման:

3. Պաշտոնյաներդ թող այս բեմեն
Սիրոյդ պատգամն միշտ հռչակեն.
Անառակներն դառնան առ Հայր,
ԶՏերն գտնեն ոչխարք մոլոր:

4. Հոս սփոփին հուսահատներ,
Մխիթարվին աղքատ և ծեր.
Հոս մանուկներ մեր սիրասուն
Սորվին հարգել Քու սուրբ Անուն:

5. Հոս քու Որդիդ մեզի ցուցուր,
Հոս մեր սրտերն սիրով լեցուր:
Հոգվոյն կապովն խաղաղութեան
Պահե զմեզ միշտ միաբան:

6. «Փառք ի բարձունս»՝ երգ օրհնութեան
Մատուցանենք Երրորդութեան,
Եվ երբ դադրին հոս մեր ձայներ,
ԶՔեզ գովեն նոր սերունդներ: